ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Սամվել Ավետիքյանի՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն կատարած այցի արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Սամվել Ավետիքյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի առաջին տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Քաղաք Պեկին, Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, 2018 թվականի փետրվարի 7-10-ը

4. Հրավիրող կողմը՝

Համաշխարհային մաքսային կազմակերպության ղեկավար Կունիո Միկուրիա և Չինաստանի գլխավոր մաքսային ծառայության նախարար Յու Գուանգժու:

5. Գործուղման նպատակը /աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/՝

«Համաշխարհային միջսահմանային էլեկտրոնային առևտրի վերաբերյալ» առաջին համաժողովին մասնակցելու նպատակով:

6. Քննարկված թեմաները՝

Համաժողովի նպատակն է նորարարական, ներառական, ռազմավարական և միասնական մոտեցում ցուցաբերել կայուն միջսահմանային էլեկտրոնային առևտրին: Համաժողովին քննարկվել են միջսահմանային էլեկտրոնային առևտրի բնագավառում ՀՄԿ ստանդարտների շրջանակի նախագծի հիմնական առանձնահատկությունների 4 տարբեր ծավալուն ուղիները, որոնք են առևտրի դյուրացում և ընթացակարգերի պարզեցում, ապահովություն և անվտանգություն, եկամուտների հավաք, չափումներ և վերլուծություն: Համաժողովին քննարկվել նաև հիմնական սկզբունքները և արդյունավետ կառավարման

մոդելները, որոնք համապատասխանում են միջսահմանային էլեկտրոնային առևտրի զարգացմանը, արտացոլում են տեսակետներ և առաջարկություններ մաքսային ընթացակարգերի և հսկողության դյուրացման տարբեր տեսանկյուններից, ինչպես նաև առաջարկում են համատեղ լուծումներ աճող ծավալների, անվտանգության, առևտրի ընթացակարգերի և հարկերի հավաքագրման դյուրացման հետ կապված խնդիրների լուծման համար:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Համաժողովին մասնակցել են 2000-ից ավել պատվիրակներ, ՀՄԿ անդամ երկրների մաքսային ծառայությունների ղեկավարներ, պաշտոնատար անձինք, ինչպես նաև բիզնեսի ներկայացուցիչներ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Նմանատիպ համաժողովները հանդիսանում են նաև լայն հարթակ երկկողմ համագործակցության բարելավման համար: Երկկողմ հանդիպումներ են տեղի ունեցել Չինաստանի մաքսային ծառայության և Ճապոնիայի մաքսային ծառայության ղեկավարության հետ: Չինաստանի պատվիրակության հետ քննարկվել է 2015 թվականի մարտի 25-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության միջև մաքսային գործերում համագործակցության և փոխադարձ օգնության մասին» համաձայնագրի իրականացման հարցերը, մասնավորապես պայմանավորվածություն է ձեռք բերվել ստեղծել համատեղ աշխատանքային խումբ համաձայնագրի իրականացման ընթացքում առաջացող խնդիրները կարգավորելու համար:

Ճապոնիայի պատվիրակության հետ քննարկվել են երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցերի լայն շրջանակ, ինչպես նաև Համաշխարհային մաքսային կազմակերպության հարթակում փոխգործակցության ուղիները:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Հանդիպման որոշումները և առաջարկությունները կարտացոլվեն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատանքային ծրագրերում: Համաձայնություն է ձեռք բերվել երկրորդ նմանատիպ համաժողովը կազմակերպել 2019 թվականի ընթացքում:

10. Գործուղվողը՝

Սամվել Ավետիքյան

11. Երևան, 12.02.2018թ.